

Հաստատում եմ՝

Արդարադատության ակադեմիայի ռեկտոր,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Սերգեյ Առաքելյան

« 11 »

2021թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Դավիթ Արմենի Օհանյանի

«Քաղաքացիաիրավական պայմանագրի մեկնաբանման արդի հիմնախնդիրները» թեմայով ԺԲ.00.03 - մասնավոր իրավունք (քաղաքացիական առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Թեկնածուական ատենախոսությունը նվիրված է քաղաքացիաիրավական պայմանագրի մեկնաբանման ինստիտուտի էության և հիմնական մոտեցումների, քաղաքացիաիրավական պայմանագրի մեկնաբանման ավանդական կանոնների, ինչպես նաև քաղաքացիաիրավական պայմանագրի մեկնաբանման «Contra proferentem» կանոնի ուսումնասիրությանը:

Ատենախոսը փորձ է կատարել մշակել գիտական այնպիսի աշխատանք, որը, ըստ էության, կհանդիսանա ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ հանրապետությունում առաջին համապարփակ հետազոտությունը:

Ատենախոսական հետազոտության օբյեկտը քաղաքացիաիրավական պայմանագրի մեկնաբանման նորմերով կարգավորվող հասարակական հարաբերություններն են: Հետազոտության առարկան ներպետական քաղաքացիական իրավունքի նորմերն են, որոնք կարգավորում են պայմանագրի մեկնաբանման ինստիտուտը և դրանց կիրառման պրակտիկան: Համեմատաիրավական հարթության մեջ ուսումնասիրվում են պայմանագրի մեկնաբանման հարաբերությունները կարգավորող արտասահմանյան իրավունքի նորմերը:

Հեղինակը փորձել է բացահայտել կամքի և կամահայտնության տեսությունների էությունը և հարաբերակցությունը, ինչպես նաև դրանց ազդեցությունը պայմանագրի մեկնաբանման ինստիտուտի վրա, սահմանել այն նախադրյալները, որոնք հնարավորություն են տալիս իրականացնել պայմանագրի մեկնաբանում, ներկայացնել պայմանագրի մեկնաբանման սուբյեկտիվ և օբյեկտիվ տեսությունների բովանդակությունը և դրանց կիրառման հնարավորությունը ներպետական օրենսդրության մեջ, բացահայտել պայմանագրի տառացի մեկնաբանմանը վերաբերող ներպետական իրավունքում ձևավորված մոտեցումները, վեր հանել թերությունները և ներկայացնել արդյունավետ լուծումներ, բացահայտել պայմանագրի ռեալ մեկնաբանմանը վերաբերող ներպետական իրավունքում ձևավորված մոտեցումները, վեր հանել թերությունները և ներկայացնել արդյունավետ լուծումներ, բացահայտել պայմանագրի մեկնաբանման «Contra proferentem» կանոնի էությունը, հասկացությունը և բովանդակությունը և վերլուծել այդ կանոնի ներպետական իրավունք տեղայնացնելու հնարավորությունը:

Ընտրված հետազոտության թեմայի արդիականությունն առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, որ պայմանագրային իրավունքի զարգացումը, քաղաքացիաիրավական պայմանագրերի բովանդակության և տեքստերի բարդացումը, առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի՝ պայմանագրային հարաբերություններին մասնակցության աճն առաջ են բերում պայմանագրային հարաբերություններում նոր վեճերի, որոնք կարիք ունեն մեկնաբանման: ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը պարունակում է պայմանագրի մեկնաբանմանը նվիրված ընդամենը մեկ՝ 447-րդ հոդվածը, որի իրավակիրառ պրակտիկան բավականին հակասական և իրարամերժ է: Ելնելով կամքի ինքնավարության և պայմանագրի ազատության քաղաքացիաիրավական սկզբունքներից՝ պայմանագրային կողմերի իրական կամքի բացահայտումը հանդիսանում է մեկնաբանման հիմնական նպատակը: Վերոնշյալ նորմը կիրառելիս ներպետական դատարանների հակվածությունը պայմանագրի տառացի նշանակությանը, առանց հաշվի առնելու վեճի լուծման համար կարևոր հանգամանքները, չի կարելի համարել արդարացված: Բացի այդ, ներպետական իրավունքում և դատական պրակտիկայում առկա մեկնաբանման կանոններն իրենց բավականաչափ արդարացնում են դասական պայմանագրային ձևաչափերում, որտեղ հստակ գործում է օֆերտա-ակցեպտ կառուցակարգը: Սակայն գոյություն ունեն պայմանագրային հարաբերություններ, որտեղ պայմանագրի մեկնա-

բանման ավանդական կանոններն այդքան էլ արդյունավետ չեն: Նման պայմաններում պետք է նախանշել այլ կանոններ, որոնցից է «Contra proferentem»-ը: Վիճելի պայմանի հեղինակի դեմ ուղղված մեկնաբանման այս կանոնի նպատակն է «պատժել» պայմանագրի ուժեղ կողմին, և, հակառակը, պաշտպանել թույլ կողմին: Նշված կանոնի կիրառման նախադրյալը տնտեսական անհավասարության պայմաններում կնքված պայմանագրերն են: Այլ կերպ ասած՝ այս կանոնի կիրառումը շատ հարմարավետ է զգում միակողմանիորեն կնքված պայմանագրերում: Հաշվի առնելով, որ ներպետական իրավունքում պայմանագրային վեճերի մեծամասնությունը ծագում է միակողմանիորեն պարտադրված պայմանագրերից (բանկային, ապահովագրական, կոմունալ սպասարկումների վեճեր և այլն), հեղինակի կարծիքով ՀՀ օրենսդրության մեջ դրա նախատեսումը հնարավորություն կտա արդյունավետորեն լուծել այդ ոլորտում առկա վեճերը:

Հետազոտության գիտական նորույթն արտահայտվում է նրանում, որ քաղաքացիաիրավական պայմանագրի մեկնաբանման թեմայով ՀՀ օրենսդրությունում այդ ինստիտուտի նախատեսման ժամանակահատվածից ի վեր չի կատարվել խոր, բազմակողմանի և համապարփակ ուսումնասիրություն: Գիտական նորույթը պայմանավորված է նաև պաշտպանության ներկայացված դրույթներով:

Հետազոտության արդյունքները կարող են տեսական հիմք հանդիսանալ հետագա գիտական հետազոտությունների համար: Ատենախոսության մեջ ներկայացված մոտեցումներն ու կատարված հետազոտության արդյունքների վրա հիմնված առաջարկությունները կարող են օգտագործվել օրենսդրության կատարելագործմանն ուղղված օրինաստեղծ գործունեության ընթացքում, իրավակիրառ պրակտիկայում, ինչպես նաև ուսումնական գործընթացում:

Ատենախոսությունում հեղինակը մանրամասնորեն հետազոտել է վերաբերելի տեսական, օրենսդրական, տեղեկատվական նյութերը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք ներառում են ինը պարագրաֆ, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի ու գրականության ցանկից:

Ատենախոսության կառուցվածքը թույլ է տվել հեղինակին համակարգային, բազմակողմանի, ամբողջական և ճիշտ եղանակներով լուծել հետազոտության թեմայի

վերաբերյալ առաջ քաշած խնդիրները: Աշխատանքը գրված է գրագետ, իրավաբանական լեզվով:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները, իսկ ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատված գիտական հրատարակությունների համար ընդունելի պարբերականներում հեղինակի հրատարակած թվով յոթ հոդվածները բավարար չափով արտացոլում են ատենախոսության հիմնական արդյունքները:

Այսպիսով, ընտրված թեմայի արդիականությունը, հետազոտության օբյեկտի և առարկայի ճշտությունը, նպատակները, տեսական և գործնական խնդիրներին առաջարկվող լուծումները, ինչպես նաև հետազոտության տեսական և կիրառական նշանակությունը կասկած չեն հարուցում:

Միաժամանակ պետք է արձանագրել, որ աշխատանքի վերաբերյալ առկա են որոշակի նկատառումներ և դիտողություններ, որոնք հանգում են հետևյալին.

1. Ատենախոսության ներածության մեջ հեղինակն անհրաժեշտ է համարում հայրենական քաղաքացիական իրավունքի դոկտրինում պայմանագրի մեկնաբանման վերաբերյալ հարցի զարգացումը, որի նպատակով ուսումնասիրվել է արտասահմանյան փորձը, մասնավորապես՝ Գերմանիայի, Ֆրանսիայի, Անգլիայի, ինչպես նաև ԱՄՆ-ի և ՌԴ իրավական համակարգերի փորձը: Այստեղ պետք է նկատի ունենալ, որ նշված երկրները, որպես կանոն, իրավական համակարգով և արդարադատության պատմական զարգացմամբ ու չափանիշներով տրամագծորեն տարբերվում են հայրենականից: Նման պարագայում ներմուծված ցանկացած բարելավում պրակտիկայում կարող է նաև արդյունավետ չգործել, եթե նախապես մանրակրկիտ մշակված չեն այն գործածության մեջ դնելու պատշաճ մեխանիզմներ: Այլ կերպ ասած՝ նպատակ հետապնդելով զարգացնել պայմանագրի մեկնաբանության խնդիրը հայաստանյան իրավունքում՝ որպես առաջնահերթություն անհրաժեշտ ենք համարում դիտարկել դրա արդյունքում առաջ եկող հնարավոր ռիսկերը և դրանց կառավարումը: Ուստի կարծում ենք, որ աշխատանքը կշահեր, եթե հեղինակն անդրադարձ կատարեր նաև պայմանագրի մեկնաբանման ինստիտուտի զարգացման դեպքում նորամուծությունների գործնական կիրառության հնարավոր ռիսկերին և դրանց կառավարման մեխանիզմներին:

2. Ատենախոսության 3-րդ գլուխը նվիրված է պայմանագրի մեկնաբանման «Contra proferentem» կանոնին, որտեղ հեղինակը ներկայացրել է այդ կանոնի ծագումը, զարգացումը, նախադրյալները, միջազգային փորձը և որպես վերջնարդյունք առաջադրել է 8-րդ պաշտպանության ենթակա դրույթը: Մասնավորապես, հեղինակն առաջարկել է ներպետական օրենսդրության մեջ նախատեսել հետևյալ կարգավորումը. «Contra proferentem» կանոնի համաձայն՝ վիճելի պայմանը մեկնաբանվում է ընդդեմ պայմանի հեղինակի և համապատասխանաբար այն կողմի օգտին, ով ընդունել է այդ պայմանը: «Contra proferentem» կանոնը կիրառվում է միակողմանիորեն պարտադրված պայմանագրերի դեպքում և այն ժամանակ, երբ մեկնաբանման մյուս կանոնները ծախողվում են:

Եթե նույնիսկ «Contra proferentem» կանոնը պետք է կիրառել միակողմանիորեն պարտադրված պայմանագրերի դեպքում, այնուամենայնիվ, չենք կիսում այն տեսակետը, թե կանոնը պետք է կիրառվի մեկնաբանման մյուս կանոններից հետո:

Ինչպես նշում է հեղինակը՝ կանոնն առավել հարմարավետ կիրառվում է ստանդարտ բնույթի պայմանագրերում: Այս կանոնն առավելապես նպատակ է հետապնդում պաշտպանելու սպառողների շահերը: Հենց այդ շահերն են դարձել «Contra proferentem» կանոնի իրավաքաղաքական նախադրյալը: Հետևաբար կարծում ենք, որ «Contra proferentem» կանոնը որպես մեկնաբանման վերջին միջոց դիտարկելն ինքնին չի բխում սպառողների շահերից, այսինքն՝ այն նախադրյալից, որն ի սկզբանե ընկած է եղել այս կանոնի հիմքում: Կարծում ենք, որ միակողմանիորեն պարտադրված պայմանագրերի պարագայում նպատակահարմար է նախատեսել առանձին իրավական ռեժիմ և կիրառել բացառապես «Contra proferentem» կանոնը:

3. Պաշտպանության ներկայացվող 2-րդ դրույթում հեղինակն առաջարկում է օրենսդրական մակարդակով պայմանագրի մեկնաբանման ժամանակ արգելել լեզվաբանական փորձաքննությունների իրականացումը, իսկ լեզվաբանական այլ հնարքների կիրառումը, հեղինակի կարծիքով, դատարանի համար կարող է ունենալ միայն ուղղորդող նշանակություն: Ըստ հեղինակի՝ պայմանագրի մեկնաբանման ժամանակ դատարանի կողմից լեզվաբանների օգնությամբ լեզվաբանական հնարքների կիրառումը ոչ միայն կարող է օգտակար չլինել վեճի լուծման տեսանկյունից, այլ ընդհակառակը՝ կարող է ավելի խճճել իրավիճակը:

Նման մոտեցմանը դժվար է համաձայնվել, քանի որ ցանկացած լեզվի առանձնահատկություններից է դրա բաղադրիչների՝ բառերի և արտահայտությունների մեկնաբանման տարբերությունը: Լեզվաբանական փորձաքննության դիմում են այն դեպքերում, երբ անհրաժեշտություն է առաջանում պարզել այս կամ այն բառի (առանձին վերցված կամ պայմանագրի համատեքստում) իմաստային բովանդակությունը: Այսպես, տնտեսության բնագավառում պայմանագիր կնքած կողմերը երբեմն տարբեր ձևով են հասկանում պայմանագրի պայմանները: Խնդիրն այն է, որ նշված բնագավառում պայմանագրերը կազմվում են որոշակի իրավաբանական միտք ունեցող յուրահատուկ եզրույթներով կամ արտահայտություններով, որոնք առօրյաում կարող են լրիվ այլ նշանակությամբ օգտագործվել: Դատական կարգով վեճի լուծման դեպքում կոնկրետ բառի կամ արտահայտության իրական նշանակությունը դատարանը պարզում է լեզվաբան-փորձագետի միջոցով:

Վերը շարադրվածը հիմնավորում է լեզվաբանական փորձաքննության, լեզվաբանական տարբեր հնարքների կիրառման անհրաժեշտությունը:

Պետք է նշել, սակայն, որ նշված նկատառումները կրում են մասնավոր և խորհրդատվական բնույթ, չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը և պայմանավորված են աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Հետևաբար, Դավիթ Արմենի Օհանյանի «Քաղաքացիաիրավական պայմանագրի մեկնաբանման արդի հիմնախնդիրները» թեմայով ատենախոսական հետազոտությունն իրենից ներկայացնում է արդիական, գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական նշանակություն ունեցող ավարտուն, ինքնուրույն ուսումնասիրություն, որը ներառում է տեսության, օրենսդրության, իրավակիրառ պրակտիկայի համար կարևոր նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ գիտականորեն հիմնավորված լուծումներ:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Դավիթ Արմենի Օհանյանի «Քաղաքացիաիրավական պայմանագրի մեկնաբանման արդի հիմնախնդիրները» վերտառությամբ ատենախոսությունը լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով» սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման ԺԲ.00.03 - մասնավոր իրա-

